

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 25-06-2024 թ. որոշմամբ
«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Ց ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂԱՄՅԱՆ 24	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01136	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2009-09-02	
1.5 ՀՎՀՀ-ն	00100778	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)11710122	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը	haik.antoniann@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գագիկ Արզումանյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	5	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակներով պայմանավորված	17,909,123
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակներով պայմանավորված	3,290,550
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուներ/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	բժշկական կանխարգելիչ ավտորոշիչ համալիր	2,960,244
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Գրքեր	204,500
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Մանկական վերականգնողական կենտրոն	44,400,000	
Նոր Էջ նախագիծ	7,500,000	
Դիլիջանի "Արմաթ" տեխնոլոգիական ճամբարում երկու սանի մասնակցություն	250,000	
Մանկական զգայական ինտեգրացիայի սենյակի կահավորում	16,388,862	
Արենիում Արցախցի փախստականներին բնակարանային պայմանների բարելավում	327,455	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	105,069,090	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	68,866,317	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 35 էջերից: Էջերի քանակը

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ _____ էջերից:
 Էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

**«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**Ֆինանսական հաշվետվությունների
միջազգային ստանդարտներին
համապատասխան`
Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն**

Բովանդակություն

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական հաշվետվություններ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն.....	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	2
Չուտ ակտիվներում փոփոխության մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	Հիմնադրամը և նրա գործունեությունը	5
2	Հիմնադրամի գործառնական միջավայրը	5
3	Պատրաստման հիմքը.....	6
4	Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ.....	14
5	Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին.....	15
6	Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	18
7	Շահութահարկ	20
8	Միջոցների իրացումից եկամուտ	21
9	Հիմնական միջոցներ	21
10	Կապիտալացվող շինարարական աշխատանքներ.....	22
11	Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	23
12	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24
13	Հետաձգված հասույթ.....	24
14	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	25
15	Ակտիվներին վերաբերող շնորհներ	25
16	Ռիսկերի կառավարում	25
17	Ֆինանսական գործիքների իրական արժեքը	29
18	Կապիտալ կառավարում.....	29
19	Պայմանական պարտավորություններ.....	29
20	Գործարքներ կապված կողմերի հետ	30
21	աշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	30



Անկախ աուդիտորական եզրակացություն

«Երևան իմ սեր» հիմնադրամի ղեկավարությանը և հոգաբարձուների խորհրդին:

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Երևան իմ սեր» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական վիճակն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Հիմնադրամի նույն ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը համաձայն ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման էական քաղաքականության տեղեկատվություն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիր») սկզբունքների: Մենք կատարել ենք Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ Վարքագրին համապատասխան:

«Փրայստրիթերհաուս Գուպերս Արմենիա» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Մարգսյան 2, «Գամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեն.՝ (37410) 512151, ֆաքս (37410) 521000, www.pwc.com/am

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՅՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի հումքը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:



- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ հույսերը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օդակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:



Լին Կարապետյանի
Տնօրեն

18 Հունիսի 2024թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

PricewaterhouseCoopers Armenia LLC

**«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Միջոցների իրացումից եկամուտ	8	58,830	76,371
Համախառն եկամուտ		58,830	76,371
Ծրագրային ծախսեր	8	(58,830)	(76,371)
Անձնակազմի ծախսեր		(15,942)	(16,192)
Մաշվածության գծով ծախս		(12,171)	(14,869)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(11,184)	(12,058)
Մասնագիտական ծառայություններ		(2,222)	(2,134)
Այլ օգուտներ / (վնասներ), զուտ		147	(1,324)
Գործառնական գործունեության զուտ ծախսեր		(41,372)	(46,577)
Ֆինանսական եկամուտ	11	3,433	7,130
Արտարժույթի փոխարկումից վնաս հանած օգուտներ		1,525	(50,362)
Վնաս մինչև հարկումը		(36,414)	(89,809)
Շահութահարկի գծով ծախս	7	(684)	(1,555)
ՏԱՐԿԱ ՎՆԱՍ		(37,098)	(91,364)
Այլ համապարփակ եկամուտ տարվա համար		-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԿԱ ՀԱՍՆՊԱՐՓՈՒԿ ՎՆԱՍ		(37,098)	(91,364)

Հաստատվել է իրապարակման և ստորագրվել է 2024թ. հունիսի 18-ին:

Գագիկ Աղոլմանյան
Տնօրեն


Հայկ Անտոնյան
Գլխավոր հաշվապահ



**«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ծմ ճ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	31,811	26,224
Ոչ նյութական ակտիվներ		163	220
Ժամկետային ավանդներ	11	68,858	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		100,832	26,444
Ընթացիկ ակտիվներ			
Կապիտալացված շինարարական աշխատանքներ	10	784,319	784,319
Պաշարներ		1,785	2,474
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		951	2,523
Ժամկետային ավանդներ	11	-	152,062
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	5,256	17,386
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		792,311	958,764
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		893,143	985,208
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	15	6,806	6,053
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		6,806	6,053
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հասույթ	13	837,264	891,803
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	3,936	4,323
Ընթացիկ հարկային պարտավորություն		684	1,478
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		841,884	897,604
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		848,690	903,657
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		44,453	81,551

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2024թ. հունիսի 18-ին:


Գագիկ Արղումանյան
Տնօրեն




Հայկ Աստուխյան
Գլխավոր հաշվապահ

5-30 Էջերում ներկայացված ծանոթա անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվությունների

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Չուտ ակտիվներում փոփոխության մասին հաշվետվություն

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Չուտ ակտիվներ
Առ 1 հունվարի 2022թ.	172,915
Տարվա վնաս	(91,364)
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎՆԱՍ	(91,364)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	81,551
Տարվա վնաս	(37,098)
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎՆԱՍ	(37,098)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	44,453

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Նվիրատվություններից մուտքեր		4,291	905
Ծրագրային ծախսերի գծով վճարումներ		(52,150)	(67,537)
Աշխատակիցներին տրվող վճարներ		(12,314)	(16,570)
Վարչական և այլ ծախսերի գծով վճարներ		(33,700)	(36,682)
Վաճառված նյութերից մուտքեր		480	616
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		(93,393)	(119,268)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մարված ավանդներ		71,716	105,146
Ստացված տոկոսներ ժամկետային ավանդների գծով		16,616	80
Հիմնական միջոցների ձեռքբերում		(6,904)	(351)
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտներ		-	458
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		81,429	105,333
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(166)	(4,099)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ փոփոխություն		(12,130)	(18,034)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին		17,386	35,421
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	12	5,256	17,386

5-30 Էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1 Հիմնադրամը և նրա գործունեությունը

«Երևան իմ սեր» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») գործունեությունն ուղղված է Երևանի ճարտարապետական մշակութային ժառանգության վերականգնմանն ու պահպանմանը, կրկին կիրառելի դարձնելով շենքերը՝ հաշմանդամ երեխաների, երիտասարդների և անապահով ընտանիքների կենսապայմանները և կյանքի որակը բարելավելու նպատակով: Սա հավակնոտ բարեգործական ծրագիր է, որն ունի երկու հիմնական նպատակ:

Վերականգնում և վերակառուցում. պահպանել և վերականգնել Երևանի պատմական թաղամասերը և համակարգել ջանքերը՝ փրկելու 3000-ամյա քաղաքի մշակութային և ճարտարապետական ժառանգությունը, վերջինիս ավանդույթները և մերձակայքը: Վերականգնել պատմական շինությունները և հարմարեցնել դրանք նոր և լուսավոր նպատակների համար, սակայն ամենից գլխավորը՝ մարդկանց, նրանց կենսապայմանները և կյանքի որակը պլանավորման առանցքում պահելն է:

Սոցիալական ազդեցություն. բարելավել երեխաների, երիտասարդների, հատկապես՝ ծնողազուրկների և սոցիալապես խոցելի համայնքների անդամների կրթությունը և կենսափորձը, օգնել սոցիալապես և առողջապես խոցելի երեխաներին ու երիտասարդներին՝ աջակցելով նրանց առօրյա կյանքում վստահություն և ինքնուրույնություն ձեռք բերել:

«Երևան իմ սեր» բարեգործական հիմնադրամն էր հիմնադրվել է բժիշկ Արմեն Սարգսյանի և նրա ընտանիքի կողմից: Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Բաղրամյան 24:

Հիմնադրամի աշխատանքների կառավարումը և վերջնական վերահսկողությունն իրականացվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնադրամը նվիրատվություններ է ստանում իր հիմնադրից, ՀՀ և օտարերկրյա բիզնեսներից ու անհատներից:

Հիմնադրամի աշխատակիցների թիվը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 5 (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5):

2 Հիմնադրամի գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ենթակա լինել տարաբնույթ մեկնաբանումների (Ծանոթագրություն 7): Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմը տարբեր ուղղություններով ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա: Մի կողմից, Հայաստանը դարձել է տասնյակ հազարավոր այցելուների ժամանակավոր բնակության վայր և տնտեսական հետաքրքրությունների եզակի կենտրոն, ինչը, մասնավորապես, լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում ֆինանսական գործառնականությունների համար: Ավելին, Ռուսաստանի տնտեսությունում առաջանում են ազատ շուկայական սեգմենտներ, որոնք լայն հնարավորություն են ընձեռում արտահանումը խթանելու և ՀՀ-ից վերաարտահանման գործառնականություններ իրականացնելու համար: Ավելին, Հայաստանի տնտեսական համակարգի վրա միանշանակ ազդում են Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառվող պատժամիջոցները: Բացի այդ, Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ազդեցությունը կարելի է դիտարկել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարթություններում: Հայկական արժույթը շարունակել է արժևորվել 2023թ., ինչը հիմնականում պայմանավորված է եղել հայաստանյան շուկա արտարժույթի մեծածավալ փոխանցումներով:

2022 թվականի սկզբին Հայաստանի տնտեսությունը շարունակել է դրսևորել դրական դինամիկա՝ համաճարակի և Լեռնային Ղարաբաղում պատերազմից հետո վերականգնման ժամանակաընթացքում: Այս միտումը զգալիորեն խթանվել է նաև՝ պայմանավորված Ռուսաստանի և Ուկրաինայի միջև պատերազմի հետանկյունով ՌԴ բազմաթիվ քաղաքացիների՝ Հայաստան տեղափոխմամբ: Այս ներհույսը մեծապես խթանել է Հայաստանի տնտեսությունը և նպաստել է խմբի գործունեության զարգացմանը՝ հաշվի առնելով առաջացած բարձր գնողունակությունը և խմբի կողմից վաճառվող կոսմետիկայի տեսականու օգտագործման աճը: Այնուամենայնիվ, 2022թ. դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղի շրջափակումը հսկայական բացասական ազդեցություն թողեց Հայաստանի տնտեսական, ինչպես նաև քաղաքական իրավիճակի վրա: 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո ավելի քան հարյուր հազար մարդ՝ այսինքն, Լեռնային Ղարաբաղի գրեթե ողջ բնակչությունը, մեկ շաբաթվա ընթացքում արտագաղթեց Հայաստան: Ըստ այդ, որպես տարածաշրջան, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի համար յ կորուստ հանդիսացավ, այդ թվում՝ ձևավորված տնտեսական կապերի առումով:

3 Պատրաստման հիմքը

Պատրաստման հիմքը. Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՀՀՄՍ»), պահանջներին համապատասխան («ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ»), սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության էական սկզբունքները ներկայացված են ստորև: Բացի 2023թ. հունվարի 1-ից գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններից, այս քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ (տես Ծանոթագրություն 5):

ՀՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման էական գնահատումներ: Բացի այդ, խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ Հիմնադրամի ղեկավարությանն անհրաժեշտ է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Անընդհատության հիմունքը. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացիկ ակտիվները և ժամկետային ավանդները 19,285 հազար դրամով գերազանցել են ընթացիկ պարտավորությունները: Հիմնադրամի ղեկավարությունը նախատեսում է գործունեությունը ֆինանսավորել բանկային ավանդի միջոցով (առկա է միջոցների վաղաժամկետ դուրսբերման իրավունք), ինչպես նաև 2024թ. ներգրավվելիք նոր նվիրատվությունների հաշվին:

Արտարժույթի փոխարկում. Հիմնադրամի գործառնական արժույթը հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որում Հիմնադրամը գործում է: Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

Գործարքներ և մնացորդներ. Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ-ի՝ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 404.79 ՀՀ դրամ (2022թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 393.57 ՀՀ դրամ), 1 անգլիական ֆունտ ստեռլինգ = 515.38 ՀՀ դրամ (2022թ.՝ 1 անգլիական ֆունտ ստեռլինգ = 474.13 ՀՀ դրամ), 1 եվրո = 447.90 դրամ (2022թ. 1 եվրո = 420.06 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, եթե վերջինս պահանջվում է:

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

3 Պատրաստման հիմքը (Շարունակություն)

Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Մաշվածություն Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Գրասենյակային սարքավորումներ 3-8 տարի
Փոխադրամիջոցներ 8 տարի

Ակտիվի մնացորդային արժեքը այն գնահատված գումարն է, որը Հիմնադրամը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները: Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայություն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները համարվում են տեղի ունեցած հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և զեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

3 Պատրաստման հիմքը (Շարունակություն)

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի գույտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն հավելավճի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեդը: Այդպիսի պարզևավճարները կամ զեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում:

Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում: Գնված կամ սկզբնավորված վարկային տեսանկյունից արժեգրված (POCI) ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ ակտիվների համար արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով պարտքային ռիսկը, այսինքն. հաշվարկվում է սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա, և ոչ թե պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա:

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում . Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Բոլոր մյուս ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներում ներդրումների գծով ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

Ֆինանսական ակտիվների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող կորուստներով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում («ստանդարտ պայմաններով» առջ ու վաճառքի գործարքներ) ճանաչվում են գործարքի ամսաթվով, այսինքն այն ամսաթվով, երբ Ընկերությունը պարտավորվում է գնել կամ վաճառել ֆինանսական ակտիվը: Մնացած բոլոր գնման գործարքները ճանաչվում են այն ժամանակ, երբ Հիմնադրամը սկսում է այդ ֆինանսական գործիքի մասով հանդես գալ որպես պայմանագրի կողմ:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Գնահատման կատեգորիաները Ֆինանսական ակտիվները դասակարգելիս Հիմնադրամը կիրառում է չափման հետևյալ կատեգորիաները՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը կախված է (i) ակտիվների համապատասխան պորտֆելի կառավարման համար նախատեսված Հիմնադրամի բիզնես մոդելից և (ii) ակտիվի դրամական հոսքերի բնութագրից:

3 Պատրաստման հիմքը (Շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Բիզնես մոդել: Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Հիմնադրամը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Հիմնադրամի նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործողությունների բոլոր պատշաճ ապացույցների վրա, որոնք Հիմնադրամը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին համեմտելու համար:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, թե արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումների հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս՝ Հիմնադրամը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային պարտքային ռիսկերը և շահույթի մարժան:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում. Ֆինանսական գործիքները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ընդհանուր առմամբ փոփոխվում է պորտֆելը կառավարող բիզնես մոդելը: Վերադասակարգումը կիրառվում է առաջընթաց կերպով՝ առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ Հիմնադրամը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր ակնկալվող պարտքային կորուստները: Հիմնադրամը գնահատում է պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի ժամանակային արժեքը, և (iii) տեղի ունեցած իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները և պայմանագրային ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի: Վարկային հանձնառությունների և ֆինանսական երաշխիքների համար ակնկալվող պարտքային կորուստի համար առանձին պահուստը ճանաչվում է որպես պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների համար ամորտիզացված արժեքի փոփոխությունները՝ զուտ ակնկալվող պարտքային կորուստներից, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ որպես օգուտ, հանած վնաս իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների համար:

3 Պատրաստման հիմքը (Շարունակություն)

Հիմնադրամը կիրառում է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի չափման պարզեցված մոտեցում: Մնացած ֆինանսական ակտիվների համար Հիմնադրամը կիրառում է հետևյալ արժեզրկման եռաստիճան մոդելը՝ հիմնված վարկային որակի փոփոխությունների վրա սկզբնական ճանաչման պահից: Ֆինանսական ակտիվը, որը արժեզրկված չէ սկզբնական ճանաչման պահին, դասակարգվում է առաջին մակարդակում: Առաջին մակարդակում գտնվող ֆինանսական ակտիվների ակնկալվող պարտքային կորուստները չափվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար, որոնք բխում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվին հաջորդող 12 ամիսների ընթացքում հնարավոր անվճարումակության ռեպերից (12-ամսյա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գումար): Եթե Հիմնադրամն արձանագրում է սկզբնական ճանաչման պահից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճ, ակտիվը տեղափոխվում է երկրորդ մակարդակ և ակնկալվող պարտքային կորուստը չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների չափով, այսինքն մինչև պայմանագրային ժամկետի ավարտը («ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ»): Պարտքային ռիսկի նշանակալի աճի նկարագրությունը ներկայացված է ծանոթագրություն 16-ում: Եթե Հիմնադրամը գնահատում է ֆինանսական ակտիվը որպես արժեզրկված, ակտիվը տեղափոխվում է երրորդ մակարդակ և ակնկալվող պարտքային կորուստը չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների չափով:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Հիմնադրամը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Հիմնադրամը կարող է դուրս գրել այն ֆինանսական ակտիվներ, որոնց վերաբերյալ դեռևս ձեռնարկվում են հարկադիր կատարողական միջոցառումներ, երբ Հիմնադրամը փորձում է հավաքագրել պայմանագրով նախատեսված պարտքի գումարները, չնայած որ այն չունի հիմնավորված ակնկալիքներ դրանց հավաքագրումից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում: Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվները (ա) երբ այդ ակտիվները վերադարձվում են, կամ այդ ակտիվների հետ կապված դրամական միջոցների հոսքի ժամկետն ավարտվել է, կամ (բ) Հիմնադրամը փոխանցել է դրամական միջոցների հոսքի իրավունքը ֆինանսական ակտիվներից կամ կնքել է ռիսկերի և հատույցների փոխանցման պայմանագիր, և (i) փոխանցել է նաև գրեթե բոլոր ռիսկերը և հատույցները, որոնք կապված են այդ ակտիվների սեփականության հետ, կամ (ii) ո՛չ փոխանցել է ո՛չ էլ պահպանել է գրեթե բոլոր ռիսկերը և հատույցները, որոնք կապված են այդ ակտիվների սեփականության հետ, բայց կորցրել է այդ ակտիվների նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը պահպանվում է, եթե գործընկերը չունի չկապակցված երրորդ կողմին ակտիվը ամբողջությամբ վաճառելու հնարավորություն՝ առանց վաճառքի սահմանափակումներ կիրառելու:

Ֆինանսական ակտիվների փոփոխություն: Երբեմն Հիմնադրամը վերաբանակցում կամ այլ կերպ վերափոխում է ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները:

Այն դեպքում, երբ վերաբանակցումը պայմանավորված է գործընկերոջ ֆինանսական դժվարություններով և պայմանագրային վճարումները չկատարելու կարողությամբ, Հիմնադրամը համեմատում է սկզբնական և վերափոխված դրամական միջոցների հոսքերը, որպեսզի հասկանա, արդյոք ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները էականորեն տարբերվում են պայմանագրային վերափոխման արդյունքում: Եթե ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները չեն փոխվում, վերափոխված ակտիվը էականորեն չի տարբերվում սկզբնական ակտիվից և վերափոխումը չի հանգեցնում ապաճանաչման: Հիմնադրամը հաշվարկում է համախառն հաշվեկշռային արժեքը գեղջեղվող վերափոխված պայմանագրային դրամական միջոցների հոսքերը ըստ սկզբնական տոկոսադրույքի (կամ պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ սկզբնական ճանաչման պահի սկսած) և ճանաչում է վերափոխումից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. չափման կատեգորիաներ: Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ. (i) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններից: Այս դասակարգումը վերաբերում է ածանցյալ ֆինանսական գործիքներին, առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններին (օրինակ, արժեթղթերի կարճ դիրքեր), պայմանական հատուցմանը, որը բիզնեսի միավորման ժամանակ ճանաչվում է ձեռք բերողի կողմից և սկզբնական ճանաչման պահին որպես այսպիսին սահմանված այլ ֆինանսական պարտավորություններին, և (ii) ֆինանսական երաշխավորության պայմանագրերի և փոխատվության հանձնառությունների:

3 Պատրաստման հիմքը (Շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ. ապաճանաչում. Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Հիմնադրամի և նրա սկզբնական փոխատուների միջև Էապես տարբեր պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը, ինչպես նաև առկա ֆինանսական պարտավորությունների պայմանների Էական փոփոխությունները հաշվառվում են որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Պայմանները Էապես տարբերվում են, եթե նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքը ներառյալ վճարված վճարները՝ առանց ստացված և գեղչված վճարների՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, առնվազն 10%-ով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական հոսքերի գեղչված ներկա արժեքից:

Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ցանկացած ծախսեր կամ վճարներ ճանաչվում են շահույթ կամ վնաս մարումից: Եթե փոխանակումը կամ փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ցանկացած ծախսեր կամ վճարներ ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության մնացած ժամկետի ընթացքում:

Պարտավորությունների փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում մարման, հաշվառվում են որպես գնահատման փոփոխություն՝ օգտագործելով կուտակային փոխհատուցման մեթոդը, ցանկացած օգուտ կամ վնաս ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվեկշռային արժեքների տարբերության տնտեսական Էությունը վերագրվում է սեփականատերերի հետ կապիտալ բնույթի գործարքի:

Ֆինանսական գործիքներ. հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կամ մարելու գուտ արժեքը, կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Այդ հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Բացառությամբ օրենսդրությամբ պարտադիր բնութագրերը, ինչպես օրինակ՝ որոշ երկրներում գործող՝ պարտավորություններից ազատման օրենսդրությունը, ազդեցություն չեն ունենում միայն մայր գումարի և տոկոսագումարի թեստի վրա, եթե դրանք ներառված չեն պայմանագրային պայմաններում, որպեսզի այդ բնութագիրը կիրառվի նույնիսկ այն դեպքում, եթե օրենսդրությունը հետագայում փոխվի:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր: Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3 Պատրաստման հիմքը (Շարունակություն)

Շինարարության ծախսերը կապիտալացվում են: Կապիտալ նախագծերի ծախսերը, որի մեջ մտնում են շինանյութերի, աշխատուժի և այլ հարակից ծախսերը, կուտակվում/կապիտալացվում են Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության՝ «կապիտալացված շինարարական աշխատանքներ» տողում, քանի դեռ շինարարությունը չի ավարտվել և նախատեսված են նվիրատվության համար: Այս կապիտալացված շինարարական ծախսերը դիտվում են որպես Հիմնադրամի ընթացիկ ակտիվներ և հաշվառվում են ինքնարժեքով:

Շենքը նվիրաբերելուց հետո Հիմնադրամը դուրս կգրի շինարարության կուտակված կապիտալացված ծախսերը՝ հաշվի առնելով հիմնադրամի ստացած միջոցները/հետաձգված հասույթը: Ինչ վերաբերում է այլ պաշարներին, ապա կապիտալացված շինարարական ծախսումների արժեքը ճշգրտվում է իրացման գուտ արժեքի չափով՝ ըստ անհրաժեշտության:

Հետաձգված հասույթ Սահմանափակ օգտագործման պայմաններով ստացված նվիրատվությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես հետաձգված հասույթ: Դրանք ճանաչվում են որպես հասույթ՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ ըստ ծրագրերի իրականացման ծախսերի, ինչի նպատակով էլ ստացվել էին նվիրատվությունները: Շինարարական աշխատանքների գծով հետաձգված հասույթը ճանաչվում է որպես հասույթ՝ ավարտուն վիճակում ծրագրի հանձնման պահին: Սահմանափակվում չունեցող նվիրատվություններից միջոցների մուտքը ուղղակիորեն ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Հատուցումներ աշխատակիցներին. Աշխատավարձը, տարեկան վճարովի արձակուրդը, հիվանդության պատճառով բացակայությունը և պարգևավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ տվյալ հատուցումները որոշող համապատասխան ծառայությունները մատուցվել են Հիմնադրամի աշխատակիցների կողմից: Պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումներից բացի, Հիմնադրամը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական պարտավորություն:

Ճահուլթահարկ. Ֆինանսական հաշվետվություններում շահուլթահարկը ներկայացվում համաձայն օրենսդրության, որն, ըստ Էուրոյան, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահուլթահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա, եթե ֆինանսական հաշվետվությունները հաստատված են մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացումը: Շահուլթահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույթները, որոնք, ըստ Էուրոյան, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

3 Պատրաստման հիմքը (Շարունակություն)

Չետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցել ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և, երբ հետաձգված շահութահարկի ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող անձից կամ տարբեր հարկատուներից, որտեղ կա մնացորդները զուտ հիմունքով կարգավորելու մտադրություն:

Հասույթի ճանաչում. Հասույթը Հիմնադրամի սովորական գործունեության ընթացքում առաջացող եկամուտն է: Հասույթը ճանաչվում է գործարքի գնի չափով: Գործարքի գինն այն հատուցման գումարն է, որի իրավունքը Հիմնադրամը ակնկալում է հաճախորդին խոստացված ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը փոխանցելու դիմաց՝ բացառությամբ երրորդ անձանց անունից հավաքագրված գումարները:

Տոկոսային եկամուտ. Տոկոսային եկամուտը ճանաչվում է բոլոր պարտքային գործիքների համար հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այս մեթոդը հետաձգում է, որպես տոկոսային եկամտի մաս, կողմերից ստացված պայմանագրին վերաբերող ամբողջ վճարը, որը հանդիսանում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի անբաժանելի մաս: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդին վերաբերող վճարներ են հանդիսանում սկզբնավորման վճարները՝ ստացված կամ վճարված Հիմնադրամի կողմից, որոնք կապված են ֆինանսական ակտիվի ստեղծման կամ գնման հետ, օրինակ, վճարունակության գնահատման վճարներ, երաշխիքների կամ գրավների գնահատման և գրանցման վճարներ, գործիքի պայմանների բանակցման և գործարքի փաստաթղթերի կազմման վճարներ:

Այն ֆինանսական ակտիվների համար, որոնք գնված կամ սկզբնավորված պարտքային-արժեզրկված ֆինանսական ակտիվներ են, Հիմնադրամը պետք է կիրառի պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ սկզբնական ճանաչման պահից սկսած: Արդյունքում ստացվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք:

Տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, բացառությամբ (i) ֆինանսական ակտիվների, որոնք դարձել են պարտքային-արժեզրկված և որոնց համար տոկոսային հասույթը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը դրանց ամորտիզացված արժեքի նկատմամբ՝ զուտ ակնկալվող պարտքային կորուստներից, և (ii) գնված կամ սկզբնավորված պարտքային-արժեզրկված ֆինանսական ակտիվների, որոնց համար սկզբնավորման պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է դրանց ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Ակտիվներին վերաբերող շնորհներ Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են իրենց իրական արժեքով, եթե կա ողջամիտ երաշխիք, որ դրամաշնորհը կստացվի, և Հիմնադրամը կհամապատասխանի բոլոր կից պայմաններին:

Հիմնական միջոցներին առնչվող դրամաշնորհները ներառված են ոչ ընթացիկ պարտավորությունների մեջ որպես ակտիվների հետ կապված դրամաշնորհներ և հաշվեգրվում են շահույթում կամ վնասում գծային հիմունքներով՝ ակտիվների սպասվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Հիմնադրամի ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այդ ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է հաշվապահական հաշվառման գնահատականներ և ելթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատումներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Մասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում: Բնականոն գործունեության ընթացքում Հիմնադրամը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկապակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 20-ում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կստացվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Դեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները Հիմնադրամի համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները.

ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

Եթե գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին ղեկավարության գնահատականներից, ապա 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 1,389 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 1,389 հազ. դրամի նվազում (2022թ.՝ 1,501 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 1,501 հազ. ՀՀ դրամի չափով նվազում):

Կապիտալացված շինարարական աշխատանքներ. իրացման զուտ արժեք: Կապիտալացված շինարարական աշխատանքներն իրենցից ներկայացնում են անավարտ պաշարներ և հաշվառվում են փաստացի կապիտալացված ինքնարժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով: Երբ Հիմնադրամը ֆինանսական միջոցներ է ստանում կոնկրետ շինարարական նպատակների համար, այս գնահատման նպատակների համար իրացման զուտ արժեքը համարվում է համապատասխան պարտավորություն՝ ճանաչված հետաձգված հասույթում, քանի որ ակտիվը կհաշվանցվի պարտավորության դիմաց, ավարտից հետո:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հետևյալ նոր ստանդարտները և փոփոխությունները.

ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» (թողարկվել է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը: Սա ներդրողների համար դժվարեցնում էր համեմատումը և համադրումը այլ առումներով նմանատիպ ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների հետ: ՖՀՄՍ 17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները կարտացոլեն ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովվում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, Ընկերությունը անմիջապես ճանաչում է վնաս:

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը ոլորտացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 17-ի ութ ոլորտներին, և դրանք նախատեսված չեն ստանդարտի հիմնարար սկզբունքները փոխելու համար: ՖՀՄՍ 17-ում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- *Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.* ՖՀՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 4-ով սահմանված՝ ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- *Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.* Կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի որ դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- *Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.* Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:
- *Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. վնասների վերականգնում.* Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է՝ բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ:

- *Այլ փոփոխություններ.* Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում՝ խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիություն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն՝ ՖՀՄՍ 17-ի կիրառմամբ նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար: Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող շահութահարկի վճարների և մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի, ընտրված անցումային արտոնություններ և այլ աննշան փոփոխություններ:

ՖՀՄՍ 17-ը կիրառող ապահովագրողների համար անցումային պահանջների կիրառման ընտրության հնարավորություն. Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում (թողարկվել է 2021թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՖՀՄՍ 17-ի անցումային պահանջների փոփոխությունը ապահովագրողներին հնարավորություն է տալիս բարելավելու ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման վերաբերյալ տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Փոփոխությունը վերաբերում է միայն ապահովագրողների կողմից ՖՀՄՍ 17-ին անցմանը և չի ազդում ՖՀՄՍ 17-ի որևէ այլ պահանջի վրա: ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի անցումային պահանջները կիրառվում են տարբեր ամսաթվերով, և կհանգեցնեն դասակարգման հետևյալ միանգամյա տարբերություններին ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ ներկայացված համեմատական տեղեկատվության մեջ. հաշվապահական հաշվառման անհամապատասխանություններ ապահովագրական պայմանագրի գծով ընթացիկ արժեքով չափվող պարտավորությունների և ամորտիզացված արժեքով չափվող որևէ հարակից ֆինանսական ակտիվների միջև, և եթե կազմակերպությունը որոշում է վերաներկայացնել ՖՀՄՍ 9-ի նպատակներով համեմատական տեղեկատվությունը, ապա՝ դասակարգման տարբերություններ համեմատական ժամանակաշրջանում ապաճանաչված ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը չի կիրառվում) և այլ ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը կիրառվում է) միջև: Փոփոխությունը կօգնի ապահովագրողներին խուսափել այդ ժամանակավոր հաշվապահական անհամապատասխանություններից և, հետևաբար, կբարելավի համեմատական տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Դա տեղի է ունենում ապահովագրողներին ֆինանսական ակտիվների վերաբերյալ համեմատական տեղեկատվության ներկայացման տարբերակների հնարավորություն տրամադրելու միջոցով: ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ կազմակերպություններին, համեմատական տեղեկատվության ներկայացման առումով թույլատրվում է կիրառել դասակարգման ծածկույթ այն ֆինանսական ակտիվի նկատմամբ, որի համար կազմակերպությունը չի վերաներկայացնում ՖՀՄՍ 9-ի նպատակով համեմատական տեղեկատվությունը:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

Անցումային տարբերակը հասանելի կլինի գործիք՝ թույլ տալով կազմակերպությանը ներկայացնել համեմատական տեղեկատվությունն այնպես, ինչպես եթե ՖՀՄՍ 9-ի դասակարգման և չափման պահանջները կիրառվեին այդ ֆինանսական ակտիվի նկատմամբ, բայց չպահանջելով, որ կազմակերպությունը կիրառի ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները. և ֆինանսական ակտիվի նկատմամբ դասակարգման ծածկույթը կիրառող կազմակերպությունից կպահանջվի օգտագործել անցումային ամսաթվի դրությամբ հասանելի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվությունը՝ որոշելու, թե ինչպես է կազմակերպությունն ակնկալում դասակարգել այդ ֆինանսական ակտիվը ՖՀՄՍ 9 կիրառմամբ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ Եական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ Եական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի Եական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ Եական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են Եական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ Եական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են Եական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ Եական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության Եական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Եականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ Եականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները:

Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում Շահութահարկ. Միջազգային հարկային բարեփոխում – Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոններ (հրապարակված է 2023թ. մայիսի 23-ին): 2023թ. մայիսին ՀՀՄՍ-ն հրապարակել է «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ի նեղ շրջանակի փոփոխությունները: Այս փոփոխությունները կատարվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից միջազգային հարկային բարեփոխումների արդյունքում հրապարակված Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների առաջիկայում սպասվող ներդրմանը նախապատրաստվելու համար: Փոփոխությունները ժամանակավոր բացառություն են սահմանում Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների կիրառումն ապահովելու համար ընդունված կամ ըստ Եուրոյան ընդունված հարկային օրենքներից բխող հետաձգված հարկերի ճանաչման և բացահայտման պահանջի գծով: Համաձայն ՀՀՄՍ-ի կողմից սահմանված՝ ուժի մեջ մտնելու ամսաթվի, ընկերությունները կարող են բացառությունը կիրառել անմիջապես, սակայն բացահայտման պահանջները կկիրառվեն 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունների կիրառումը Էական ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2024թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Հիմնադրամի կողմից:

Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՀՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության Եուրոյանը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից: Հիմնադրամը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ Եուրոյան ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: **2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա:** Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք: Հիմնադրամը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՀՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (Թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին): Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՀՀՄՍ 7-ում պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա: Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա: Բացահայտման Նոր պահանջները կգործեն 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Հիմնադրամը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 14 «Կարգավորող հետաձգված հաշիվներ» (թողարկվել է 2014թ. հունվարի 30-ին և ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները առաջին անգամ կիրառող կազմակերպություններին ՀՀՄՍ 14-ը հնարավորություն է ընձեռում շարունակել դրույքաչափերի կարգավորման հետ կապված գումարների ճանաչումը իրենց նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, ՀՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն արդեն կիրառող և այդ գումարները չճանաչող կազմակերպությունների հետ համադրելիությունը մեծացնելու նպատակով, ստանդարտը պահանջում է դրույքաչափերի կարգավորման ազդեցությունը ներկայացնել այլ հոդվածներից առանձին: Այն կազմակերպությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները արդեն ներկայացնում է ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, իրավասու չէ կիրառել ստանդարտը:

«Ակտիվների վաճառք կամ հատկացում ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՀՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող ՀՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: Հիմնադրամը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին): 2023թ. օգոստոսին ՀՀՄՍ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սիոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն առկա չէ: Փոփոխությունները ազդում են կազմակերպության վրա այն ժամանակ, երբ ընկերությունն ունի գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՄՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սիոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սիոթ փոխարժեքը գնահատման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային տարբերությունների պահուստի ճշգրտմամբ: Չի ակնկալվում, որ փոփոխությունները որևէ էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Շահութահարկ

Հիմնադրամը գնահատում և հաշվառում է իր ընթացիկ վճարվելիք շահութահարկը և իր ակտիվների և պարտավորությունների հարկային բազան՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, որը կարող է տարբերվել ՖՅՄՍ-ից:

Հիմնադրամն ունի որոշակի մշտական հարկային տարբերություններ, որոնք առաջանում են շահութահարկի նպատակներով չնվազեցվող որոշակի ծախսերից և շահութահարկի նպատակներով չհարկվող որոշակի եկամուտներից: Համաձայն գործող օրենսդրության, ոչ առևտրային կազմակերպությունների՝ նվիրատվություններից ստացված եկամուտները և դրանց հաշվին կատարված ծախսերը չեն համարվում, համապատասխանաբար, հարկվող եկամուտներ և նվազեցվող ծախսեր շահութահարկի նպատակներով:

Ստորև բերված հաշվարկներում օգտագործվում է ներկայիս հարկի դրույթաչափը՝ 18%, որը ՀՀ-ում վճարվում են ձեռնարկությունների կողմից՝ վերջիններիս հարկվող շահույթից (ինչպես սահմանված է) ՀՀ հարկային օրենսդրության համապատասխան:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	684	1,555
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	684	1,555

Տարվա շահութահարկի գծով ծախսը հաշվապահական շահույթի հաշվարկում արտացոլվում է հետևյալ կերպ՝

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Վնաս մինչև շահութահարկով հարկումը	(36,414)	(89,809)
Շահութահարկի համար հաշվարկված ծախս 18% դրույթաչափով (2022թ.՝ 18%)	6,555	16,166
Հարկվող շահույթի որոշման ժամանակ չնվազեցվող ծախսերի ազդեցությունը	(7,239)	(17,721)
Շահութահարկի գծով ծախս	(684)	(1,555)

Հիմնադրամի եկամուտները և ծախսերը համարվում են չհարկվող և չնվազեցվող, բացառությամբ այն ծախսերի և եկամուտների որոնք վերաբերվում են Հիմնադրամի գործունեության ոչ հիմնական տեսակներին: Շահութահարկը տարվա ընթացքում առաջանում է հիմնականում տարվա ֆինանսական եկամտից:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

8 Միջոցների իրացումից եկամուտ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Դրամական նվիրատվություններ	52,150	67,524
Իրականացված ծրագրերի արժեքը	5,934	7,782
Բնաիրային նվիրատվություններ	746	1,065
Ընդամենը միջոցների իրացումից եկամուտ	58,830	76,371

Ծրագրային ծախսերը ներկայացված են համաձայն նույն տարրերի, ինչպես նշված է վերևի աղյուսակում:

9 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փոխադրամի- ջոցներ	Գրասենյակային սարքավորումներ	Ընդամենը
Սկզբնական արժեքը առ 1 հունվարի 2022թ.	33,430	64,714	98,144
Կուտակված մաշվածություն	(18,592)	(38,304)	(56,896)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2022թ.	14,838	26,410	41,248
Լրացումներ	-	390	390
Օտարումներ	-	(400)	(400)
Մաշվածության գումարը	(4,177)	(10,837)	(15,014)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	10,661	15,563	26,224
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	33,430	63,476	96,906
Կուտակված մաշվածություն	(22,769)	(47,913)	(70,682)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	10,661	15,563	26,224
Լրացումներ	-	19,473	19,473
Մաշվածության գումարը	(4,179)	(9,707)	(13,886)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	6,482	25,329	31,811
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	33,430	82,949	116,379
Կուտակված մաշվածություն	(26,948)	(57,620)	(84,568)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	6,482	25,329	31,811

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

10 Կապիտալացվող շինարարական աշխատանքներ

Հազ. ՀՀ դրամ	2023թ.	2022թ.
Սրբ. Սարգիս Եկեղեցուն կից մանկական կենտրոն		
առ 1 հունվարի	779,319	779,319
առ 31 դեկտեմբերի	779,319	779,319
Սրբ. Հովհաննես Եկեղեցուն կից մանկական կենտրոն		
առ 1 հունվարի	-	-
Չուտ իրացվելի արժեքի արժեզրկում	-	-
առ 31 դեկտեմբերի	-	-
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այգի		
առ 1 հունվարի	5,000	5,000
	5,000	5,000
առ 31 դեկտեմբերի	784,319	784,319

Սրբ. Սարգիս Եկեղեցուն կից մանկական կենտրոն Կապիտալացված շինարարական աշխատանքները ներկայացնում են հիմնադրամի կողմից Երևան քաղաքի Սուրբ Սարգիս Եկեղեցուն կից մանկական կենտրոնի կառուցման հետ կապված ծախսերը: Կենտրոնն օգտագործվում է հաշմանդամություն ունեցող երեխաների և անապահով ընտանիքների համար նախատեսված միջոցառումների և ծրագրերի համար: Կենտրոնի տարբեր ծրագրերն ու միջոցառումներն իրականացվում են գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Ծրագրով նախատեսվում է, որ միջազգային մատչելիության չափանիշներին համապատասխանող այս կենտրոնում հաշմանդամություն ունեցող երեխաները կստանան ուսուցում և կսովորեն ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ հմտություններ: Իրականացվում են մի շարք վերականգնողական և կրթական ծրագրեր, ինչպես նաև ճանաչողական և ֆիզիկական բուժական կուրսեր, որոնք կշարունակվեն նաև ապագայում:

Մանկական կենտրոնի նախագծումն ու կառուցումը սկսվել է 2013թ. 2017 թվականին մանկական կենտրոնի շինարարությունը գրեթե ավարտվել է: Մանկական կենտրոնի ավարտի վերջնական ակտի ստացումից և կենտրոնի համապատասխան պետական մարմիններում գրանցումն ավարտելուց հետո շենքը կփոխանցվի հողամասի սեփականատեր՝ Մայր Աթոռին՝ համաձայն Հիմնադրամի և Մայր Աթոռի միջև 2012թ. դեկտեմբերի 27-ին ստորագրված համաձայնագրի: 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը և Մայր Աթոռը Երևանի քաղաքապետարանի հետ քննարկում են հողամասի սահմանների փոփոխության հարցը՝ պայմանավորված կառուցված շենքի և հողամասի անհամապատասխանությամբ: 2021թ. հողամասի սեփականատերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնը, ինդրի լուծման համար դիմել է Երևանի քաղաքապետարանին, ինքնակամ շինությունը օրինականացնելու և նշված հողատարածքը սեփականության իրավունքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու խնդրանքով:

2022 թվականի փետրվարին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից մեկ այլ հարցում է ուղարկվել Երևանի քաղաքապետարան՝ խնդրին լուծում տալու խնդրանքով: Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Երևանի քաղաքապետարանից որևէ պատասխան չի ստացվել:

Հիմնադրամի ղեկավար անձնակազմը ցածր է գնահատում իրավական, գույքային կորուստների և այլ ռիսկերը, քանի որ շինարարությունն ավարտվել է մինչև 2022 թվականը, և քաղաքապետարանը կարող է ընդունել որոշում հողատարածքի սահմանների փոփոխությունը և կառույցը օրինականացնելու վերաբերյալ:

Հանրային կենտրոն՝ Սբ. Հովհաննես Եկեղեցու տարածքում. Հիմնադրամն իրականացրել է Սբ. Հովհաննես Եկեղեցուն կից իր երկրորդ կենտրոնի ճարտարապետա-տեխնիկական նախագծման և գրանցման աշխատանքները: Հիմնադրամը 2018 թվականին դադարեցրել է կենտրոնի շինարարական աշխատանքների մեկնարկը ի պատասխան շրջակա համայնքների անտուն բնակիչների խնդրանքների, մինչև իրենց հատկացված բնակարանների շինարարական աշխատանքների ավարտը: Հիմնադրամը պլանավորում է անդրադառնալ Սբ. Հովհաննես Եկեղեցու տարածքում հանրային կենտրոնի կառուցման հարցին անապաստան անձանց բնակարանների պատրաստ լինելուց հետո:

10 Կապիտալացվող շինարարական աշխատանքներ (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շինարարության ծախսերի փոխհատուցման հայտանիշների բացակայության և Հիմնադրամի սեփական միջոցներով շինարարության կատարման պատճառով շինարարության արժեքը արժեզրկվել է մինչև իրացման զուտ արժեք, որը 2023թ. կազմել է զրո: 2023թ.-ի ընթացքում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այգի. Հիմնադրամը սկսել և ավարտել է ճարտարապետական և դիզայնի աշխատանքները Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տարածքի այգում, սակայն վերականգնման և բարեկարգման աշխատանքները դեռևս չեն սկսվել:

11 Բանկերում պահվող ժամկետային ավանդներ

Առ 31 դեկտեմբերի 2023թ. և 2022թ. Հիմնադրամն ուներ ավանդ մեկ տեղական բանկում ԱՄՆ դոլարով, ավանդի տոկոսադրույքը 4.3% է (2022թ.` 4.5%):

Տարվա ընթացքում ավանդների գծով ստացված տոկոսային եկամուտը կազմել է 3,433 հազ. ՀՀ դրամ, որը ներառվել է ֆինանսական եկամուտ տողում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում (2022թ.` 7,130 հազ. ՀՀ դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ավանդները ներառում են 120 հազ. ՀՀ դրամի չափով հաշվեզրկված տոկոս (առ 31 դեկտեմբերի 2022թ.` 13,551 հազ. ՀՀ դրամ): Ավանդներից ոչ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

Ավանդի մարման ժամկետն է 2025թ. հունիսը (2022թ.` 2023թ. հունիսը), սակայն հասանելի է օգտագործման համար:

Արժեզրկման կորուստների գծով պահուստը ճանաչվել է ըստ ՖՀՄՍ 9 ընդունման պահանջների և ներկայացնում է փուլ 1-ում գտնվող ակտիվների գծով պահուստ: Արժեզրկման կորուստների գծով պահուստի համադրումն ըստ փուլերի ՖՀՄՍ 9-ի համաձայն հետևյալն է`

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ժամկետային ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստ Փուլ 1
Արժեզրկման կորուստների գծով պահուստ առ 1 հունվարի, 2022թ.	5,339
Արժեզրկման կորուստների գծով պահուստի վերականգնում տարվա ընթացքում	-
Արժեզրկման կորուստների գծով պահուստ առ 31 դեկտեմբերի, 2022թ.	5,339
Արժեզրկման կորուստների գծով պահուստի վերականգնում տարվա ընթացքում	-
Արժեզրկման կորուստների գծով պահուստ առ 31 դեկտեմբերի, 2023թ.	5,339

Ստորև աղյուսակը բացահայտում է բանկերում պահվող ժամկետային ավանդների վարկային որակը` հիմնված վարկային ռիսկի վարկանշման վրա առ 31 դեկտեմբերի 2023թ. և 31 դեկտեմբերի 2022թ.:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
B1 (Moody's)	68,858	152,062
Ընդամենը բանկերում պահվող ժամկետային ավանդներ	68,858	152,062

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Առձեռն դրամական միջոցներ	2	2
Ցպահանջ բանկային մնացորդներ	5,254	17,384
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց	5,256	17,386

Ստորև աղյուսակը բացահայտում է ցպահանջ բանկային մնացորդների վարկային որակը՝ հիմնված վարկային ռիսկի վարկանշման վրա առ 31 դեկտեմբերի 2023թ. և 31 դեկտեմբերի 2022թ.:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ba3 (Moody's)	4,211	16,598
B1 (Moody's)	1,043	786
Ընդամենը ցպահանջ բանկային մնացորդներ	5,254	17,384

Բոլոր դրամական միջոցները և դրանց համարժեքները դասակարգվում են ընթացիկ և ոչ արժեզրկված (առ 31 դեկտեմբերի 2022թ.՝ ընթացիկ և ոչ արժեզրկված): Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ԱՊԿ գծով պահուստը նշանակալի չի եղել, և հետևաբար՝ չի ձևավորվել:

13 Հետաձգված հասույթ

Ստացված նվիրատվությունները նախատեսվել են Հիմնադրամի գործունեության համար՝ ըստ վերջինիս նպատակների և ծրագրերի: Դոնորներից ստացված միջոցներն օգտագործվում են Հիմնադրամի մանդատին համապատասխանող, Հոգաբարձուների կողմից տարեկան ծրագրում և բյուջեում հաստատված ծրագրերի աջակցության համար:

Հիմնադրամը նվիրատվություններ է ստանում իր հիմնադիրներից և այլ աղբյուրներից: Հաշվետու ժամանակաշրջանում ստացված և օգտագործված նվիրատվությունները նկարագրված են ստորև ներկայացված աղյուսակում: Միջոցների օգտագործումն իրենից ներկայացնում է ծրագրային ուղիղ ծախսերի նպատակով ծախսված նվիրատվությունների միջոցները, անձնակազմի ծախսերը և վարչական ծախսերը:

	1 հունվարի 2022թ.	Շարժը 2022թ. ընթացքում	31 դեկտեմբերի 2022թ.	Շարժը 2023թ. ընթացքում	31 դեկտեմբերի 2023թ.
Ստացված նվիրատվություններ					
Դրամական	1,428,158	905	1,429,063	4,291	1,433,354
Բնաիրային	516,624	-	516,624	-	516,624
Ընդամենը նվիրատվություններ	1,944,782	905	1,945,687	4,291	1,949,978
Նվիրատվությունների օգտագործում					
Բնաիրային նվիրատվություն	(520,147)	(1,065)	(521,212)	(746)	(521,958)
Դրամական նվիրատվություններ	(236,171)	(67,524)	(303,695)	(52,150)	(355,845)
Աջակցություն գործունեությանը	(24,927)	-	(24,927)	-	(24,927)
Ծրագրային ծախսեր	(196,268)	(7,782)	(204,050)	(5,934)	(209,984)
	(977,513)	(76,371)	(1,053,884)	(58,830)	(1,112,714)
Ստացված նվիրատվությունների մնացորդ՝ հանած օգտագործումը (հետաձգված եկամուտ)	967,269	(75,466)	891,803	(54,539)	837,264
Կապիտալ ծրագրեր	(784,319)	-	(784,319)	-	(784,319)
Չօգտագործված նվիրատվությունների մնացորդ	182,950	(75,466)	107,484	(54,539)	52,945

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

14 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,021	1,332
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	2,200
	3,221	3,532
<i>Ոչ ֆինանսական պարտավորություններ</i>		
Չօգտագործված արձակուրդի պահուստ	715	791
	715	791
Ընդամենը կրեդիտորական պարտքեր	3,936	4,323

15 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հիմնադրամը ստացել է ակտիվներին վերաբերող հետևյալ շնորհները.

	2023թ.	2022թ.
Ակտիվներին վերաբերող շնորհներ առ 1 հունվարի	6,053	8,190
Ստացված նոր դրամաշնորհներ	3,165	25
Ակտիվների հետ կապված դրամաշնորհների ամորտիզացիան՝ համապատասխան մաշվածությանը համապատասխանելու համար	(2,412)	(2,162)
Ակտիվներին վերաբերող շնորհներ առ 31 դեկտեմբերի	6,806	6,053

16 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հանդիսանում է Հիմնադրամի գործունեության հիմնարար գործոն և կարևոր տարր: Հիմնադրամի գործունեությունը ենթակա է ֆինանսական գործիքների օգտագործումից հետևյալ հիմնական ռիսկերի՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության մասին, ռիսկերի գնահատման և կառավարման հետ կապված Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումները:

Ռիսկի կառավարման հիմունքներ. Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության մշակման և վերահսկման համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Հոգաբարձուների խորհրդին կատարած աշխատանքի վերաբերյալ:

Հիմնադրամի ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Հիմնադրամի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

16 Ռիսկերի կառավարում (Շարունակություն)

Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները: Հիմնադրամը կառավարում է իր ծախսումները և գուտ ակտիվները՝ իր գործունեության շարունակականության կարողությունն ապահովելու և միևնույն ժամանակ՝ իրագործելով իր նպատակները ծախսերի օպտիմալացման միջոցով: Հիմնադրամի կողմից իր ռիսկերի չափման եղանակներում փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև չեն փոփոխվել ռիսկերի ենթարկվածությունը կամ դրանց կառավարման և չափման մեթոդները:

ա) Պարտքային ռիսկ. Հիմնադրամը ենթակա է պարտքային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկ այն դեպքում, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Հիմնադրամին հիմնականում բնորոշ է պարտքային ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ բանկային հաշիվների մնացորդներում առկա դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Ռիսկի առավելագույն չափն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը: Պարտքային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ հետևյալն է՝

	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 12)	5,256	17,386
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ (Ծանոթագրություն 11)	68,858	152,062
Ընդամենը	74,114	196,448

բ) իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա իր ֆինանսական պարտավորությունների կատարման դժվարություններ՝ դրանց ժամկետը լրանալիս: Հիմնադրամը սահմանափակում է իրացվելիության ռիսկը, քանի որ գործառնություններն իրականացվում են բյուջեի համաձայն: Հիմնադրամի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է՝ մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե՛ սովորական, թե՛ արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Հիմնադրամի համբավը վտանգի ենթարկելու:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների իրացվելիության վերլուծությունը առ 31 դեկտեմբերի 2023թ. և 2022թ.: Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են չզեղչված դրամական հոսքեր՝ ելնելով դրանց պայմանագրով սահմանված ժամկետների գծով պահանջի առաջադրման ամենավաղ ամսաթվից: Չի ակնկալվում, որ այս աղյուսակներում ներկայացված դրամական հոսքերը կարող են տեղի ունենալ էապես ավելի վաղ, կամ էապես տարբեր գումարներով:

	31 դեկտեմբերի 2023թ.		
	Մինչև 6 ամիս	Ընդամենը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,021	1,021	1,021
Այլ հաշվեզրված պարտավորություններ	2,200	2,200	2,200
	3,221	3,221	3,221

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

16 Ռիսկերի կառավարում (Շարունակություն)

	31 դեկտեմբերի 2022թ.		
	Մինչև 6 ամիս	Ընդամենը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,332	1,332	1,332
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	2,200	2,200
	3,532	3,532	3,532

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը ըստ նրանց հաշվեկշռային արժեքների և պայմանագրով սահմանված ժամկետայնության:

	31 դեկտեմբերի 2023թ.		
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	12 ամսից 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Կանխիկ միջոցներ և բանկային մնացորդներ	5,256	-	5,256
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	-	68,858	68,858
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	5,256	68,858	74,114
Ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,021	-	1,021
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	-	2,200
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	3,221	-	3,221
Չուտ դիրք	2,035	68,858	70,893

	31 դեկտեմբերի 2022թ.		
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 6 ամիս	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Կանխիկ միջոցներ և բանկային մնացորդներ	17,386	-	17,386
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	-	152,062	152,062
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	17,386	152,062	169,448
Ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,332	-	1,332
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	-	2,200
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	3,532	-	3,532
Չուտ դիրք	13,854	152,062	169,448

գ) Շուկայական ռիսկ: շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկերի կառավարման նպատակն է կառավարել և վերահսկել շուկայական ռիսկի ազդեցությունները ընդունելի պարամետրերի շրջանակներում՝ միաժամանակ օպտիմալացնելով ռիսկային ակտիվների եկամտաբերությունը:

Արժույթային ռիսկ. Արժույթային ռիսկն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Հիմնադրամի գործունեությունը ծավալվում է հիմնականում Հայաստանում և, որպես այդպիսին, Հիմնադրամի գործառնությունների զգալի մասը տեղի է ունենում տեղական արժույթով՝ ՀՀ դրամով:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

16 Ռիսկերի կառավարում (Շարունակություն)

Հիմնադրամի ֆինանսական վիճակը և դրամական հոսքերը ենթակա են արտարժույթի գործող փոխարժեքի տատանումների ազդեցության ռիսկին:

Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին առ 31 դեկտեմբերի 2023թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,123	774	3,359	5,256
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	-	68,858	-	68,858
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	1,123	69,632	3,359	74,114
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,021	-	-	1,021
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	-	-	2,200
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	3,221	-	-	3,221
Բաց դիրք	(2,098)	69,632	3,359	70,773

Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին առ 31 դեկտեմբերի 2022թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	488	16,898	17,386
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	-	152,062	152,062
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	488	168,960	169,448
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,332	-	1,332
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	-	2,200
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	3,532	-	3,532
Բաց դիրք	(3,044)	168,960	165,916

Արտարժույթային ռիսկի զգայունություն: Հետևյալ աղյուսակը մանրամասնում է Հիմնադրամի զգայունությունը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի 10% աճի և նվազման նկատմամբ: Տվյալ 10%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժույթային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Չգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով գնանշված դրամային հոդվածները և ճշգրտում է դրանց փոխարկումը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 10% տարբերության տեսանկյունից: Ստորև նշված դրական թիվը ներկայացնում է շահույթի և վնասի կամ զուտ ակտիվների աճ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10% արժեզրկման դեպքում: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10% արժևորումը համապատասխան ազդեցություն կունենար շահույթի և վնասի կամ զուտ ակտիվների վրա, և մնացորդը կլիներ բացասական:

	31 դեկտեմբերի 2023թ. Համապարփակ ֆին. արդյունք/ Չուտ ակտիվներ	31 դեկտեմբերի 2022թ. Համապարփակ ֆին. արդյունք/ Չուտ ակտիվներ
ՀՀ դրամի 10% արժևորում ԱՄՆ դոլարի նկատմամբ (2022թ.՝ 10%).	(6,963)	(16,896)
ՀՀ դրամի 10% արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ (2022թ.՝ 10%).	6,963	16,896
ՀՀ դրամի 10% արժևորում եվրոյի նկատմամբ (2022թ.՝ 10%).	(336)	-
ՀՀ դրամի 10% արժեզրկում եվրոյի նկատմամբ (2022թ.՝ 10%).	336	-

16 Ռիսկերի կառավարում (Շարունակություն)

Վերևում բերված աղյուսակում ներկայացված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև կշռել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացիա) կամ արտարկվեն (էքստրապոլյացիա) այս արդյունքներից:

Տոկոսադրույքի ռիսկ. Հիմնադրամը չի ենթարկվում տոկոսադրույքի ռիսկի, քանի որ բանկերում ունի միայն ֆիքսված տոկոսադրույքով ժամկետային ավանդներ: Ղեկավարությունը չի սահմանել տոկոսադրույքի ռիսկի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն կառավարում է այս ռիսկը շուկայի տոկոսադրույքների և ֆինանսական հաստատությունների վարկանիշային գնահատումների կանոնավոր ստուգման միջոցով: Բանկում պահվող ժամկետային ավանդների տոկոսները ներկայացված են ծանոթագրություն 11-ում:

Ղեկավարությունը չի իրականացնում տոկոսադրույքի զգայունության պաշտոնական վերլուծություն, քանի որ Հիմնադրամը չի ունեցել լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ տարվա ընթացքում կամ հաշվետու ամսաթվի դրությամբ:

17 Ֆինանսական գործիքների իրական արժեքը

ՖՀՄՍ սահմանամաբ՝ իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Այստեղ ներկայացված գնահատումները կարող են բնութագրական չլինել Հիմնադրամի կողմից որոշակի գործիքի ամբողջական տևորինումը շուկայում փոխարկման արդյունքում իրացնելիս Հիմնադրամի կողմից ստացվելիք գումարների առումով:

Այնուամենայնիվ, շուկայական տվյալների հիման վրա գնահատված իրական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է կիրառել դատողություն: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է կրել զարգացող շուկայի որոշ բնութագրեր և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկայում գործառնությունների ծավալները: Շուկայական գնանշումները կարող են արդիական չլինել կամ արտացոլել արտասովոր իրացման գործարքներ, հետևաբար՝ չներկայացնել ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունը օգտագործել է շուկայում առկա որոշ հասանելի տեղեկատվությունը՝ ֆինանսական ակտիվների իրական արժեքները գնահատելու համար:

Իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատություն. Հաշվի առնելով մի շարք ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթը, ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են իրենց իրական արժեքին:

18 Կապիտալ կառավարում

Հաշվի առնելով Հիմնադրամի գործառնությունների բնույթը, Հիմնադրամը չունի ձևակերպված կապիտալի կառավարման քաղաքականություն: Հիմնադրամի նկատմամբ կիրառելի չեն կապիտալի կառավարման արտաքին պահանջներ: Հիմնադրամի նկատմամբ կիրառելի չեն կապիտալի կառավարման արտաքին պահանջներ:

Հիմնադրամի կողմից կրթական, սոցիալական և մշակութային ծրագրերի ֆինանսավորումը մեծապես պայմանավորված է տվյալ տարում նվիրատվություններից ստացված եկամտից: Ղեկավարության կարծիքով, Հիմնադրամը մինչ այսօր հնարավորություն է ունեցել համալրել բավարար միջոցներ և չի ակնկալում այդ նվիրատվությունների Եական նվազում կամ կրճատում տեսանելի ապագայում:

19 Պայմանական պարտավորություններ

Ղատական վարույթներ. Հիմնադրամը չի ունեցել այնպիսի իրավական խնդիրներ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

Իրավական վարույթ . Հիմնադրամը առ 31 դեկտեմբերի 2023թ. ներգրավված չի եղել նշանակալի դատական վարույթներում (առ 31 դեկտեմբերի 2022թ. ևս ներգրավված չի եղել որևէ դատական վարույթում): Ֆինանսական հաշվետվություններում այդ գծով պահուստ չի ստեղծվել:

19 Պայմանական պարտավորություններ (Շարունակություն)

Հարկում. Հայաստանի Հանրապետության առևտրային համակարգը կարգավորող օրենսդրությունը, ներառյալ հարկային օրենսդրությունը, կարող է ունենալ մեկից ավելի մեկնաբանություններ: Ավելին, վտանգ կա, որ հարկային մարմինները կամայական դատողություններ կարող են կիրառել ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ: Եթե Հիմնադրամի գործունեության վերաբերյալ ղեկավարության որոշակի որոշումներ հարկային մարմինների կողմից վիճարկվեն, Հիմնադրամը կարող է ենթարկվել հավելյալ հարկերի, տույժերի և տուգանքների: Սովորաբար հարկային ստուգումը վերաբերում է առևտրի տարվան նախորդող երեք օրացուցային տարիներին: Սովորաբար հարկային ստուգումը վերաբերում է առևտրի տարվան նախորդող երեք օրացուցային տարիներին: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Պարտավորություններ. Հիմնադրամը պարտավորվել է կառուցել երեք կենտրոն՝ երկուսը Երևանում և մեկը՝ Էջմիածնում: Այս ներդրումային ծրագրերի նկատմամբ Հիմնադրամի պարտավորությունները վերանայվել են համապատասխան պետական մարմինների կողմից՝ համապատասխան ոչ առևտրային գործունեության արտոնություններ և բացառություններ տրամադրելու համար: Իրականացված ծրագրերը և դրանց համապատասխան ժամկետները հետևյալն են. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացված կապիտալ ծրագրերը կազմել են 784,358 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 784,358 հազ. ՀՀ դրամ): 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի մնացած պարտավորությունը կազմել է 956,701 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 956,701 հազ. ՀՀ դրամ): Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի կողմից այս ծախսերն իրականացնելու իրավական պարտավորություններ չկան:

Ղեկավարությունն ունի ավանդի օգտագործման հնարավորություն՝ պարտավորության գումարը ֆինանսավորելու համար: Ղեկավարությունը նախատեսում է նաև նոր ֆինանսական միջոցներ ներգրավել հիմնադրամի հիմնադիրներից և դոնորներից մնացած գումարի համար:

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Հիմնադրամը չի կարող ակնկալել, որ կվերացնի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն այն փորձում է կառավարել այդ ռիսկերը վերահսկողության շրջանակի և հնարավոր ռիսկերը մշտադիտարկելու և ժամանակին դրան արձագանքելու միջոցով: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում:

20 Գործարքներ կապված կողմերի հետ

(ա) Հոգաբարձուների խորհուրդ

Հիմնադրամի կառավարումը վերահսկվում է 12 հոգաբարձուների կողմից՝ Հիմնադրամի հիմնադիր Արմեն Սարգսյանի նախագահությամբ (2022թ.՝ 14 հոգաբարձուներ): Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության: Հոգաբարձուների խորհրդի նախագահը կամ այլ հոգաբարձուները հիմնադրամից վարձատրություն չեն ստանում: Հոգաբարձուների նախագահը կամ հոգաբարձուները Հիմնադրամից վարձատրություն չեն ստանում, Հիմնադրամի նպատակներով ուղևորությունների չեն կատարում և դրանց համար չեն փոխհատուցվում:

(բ) Ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում ղեկավարության ստացած վարձատրությունը կազմել է 5,919 հազ. ՀՀ (2022թ.՝ 5,726 հազ. ՀՀ դրամ), որից՝ պարգևավճարները կազմում են գրո (2022թ.՝ գրո):

Վերոնշյալ ծախսերում ներառված կենսաթոշակային ծրագրերին կատարվող մուծումները կազմում են գրո (2022թ.՝ գրո):

21 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել իրադարձություններ, որոնք կարող են պահանջել ճշգրտում կամ բացահայտում Հիմնադրամի 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում: